TUMO
CENTER FOR CREATIVE TECHNOLOGIES

#TUMO4Artsakh**Teens**

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՌՈՂՋԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Իրավաբանների հայկական ասոցիացիան տրամադրում է անվճար իրավաբանական աջակցություն հետևյալ ուղղություններով.

- Արցախից բռնի տեղահանված անձանց խնդիրների փաստագրում,
- Արցախից բռնի տեղահանված և խոցելի (սոցիալապես անապահով, գործազուրկ, հաշմանդամ, ուսանող, կին և այլն) համարվող անձանց իրավաբանական աջակցության տրամադրում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ունեցած խնդիրների լուծման համար,
- Արցախահայերի իրավունքների պաշտպանություն և շահերի ներկայացում ՀՀ պետական մարմիններում:

Կապ հաստատելու համար զանգահարեք՝ **+374 10 540 199**

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳ» ՀԿ

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի նպատակն է խթանել և պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքները:
Հաշմանդամություն ունեցող տեղահանված այն անձինք, որոնք դժվարանում են պետական մարմիններին դիմելու հարցում, ունեն հաշմանդամության և սոցիալական ծառայությունների մասին հարցեր, դեռևս չեն ստացել ՀՀ կառավարության կողմից տրամադրվող տարբեր դրամական վճարները, ինչպես նաև ունեն հաշմանդամության սահմանման հարցում իրավաբանական օգնության անհրաժեշտություն՝ կարող են դիմել կազմակերպությանը:

Կապ հաստատելու համար զանգահարեք՝ **+374 77 400 350**

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

CENTRE CONSTITUTIONAL

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության հարցում նոր ուղեցույց:

Կենտրոնի կողմից իրականացված համապետական հարցումները և խորքային հարցազրույցները բացահայտել են, որ ԼՂ բռնի տեղահանված անձինք, ռազմական գործողությունների, տեղահանության հետևանքով կրած մարդկային ու գույքային կորուստների պայմաններում, կանգնում են իրենց՝ քաղաքացիական, սոցիալական, կրթական և աշխատանքային իրավունքների իրացման խոչընդոտների առջև:

Կենտրոնի կողմից մշակված սույն ուղեցույցի նպատակն է առավել հաճախ հանդիպող իրավիճակների վերաբերյալ ներկայացնել քայլերի այն հաջորդականությունը, որը կօգնի այս խումբ անձանց հնարավորինս սեղմ ժամկետներում և առանց ավելորդ ծախսեր կատարելու լուծել իրենց առջև ծառացած իրավական խնդիրները:

Ուղեցույցին ծանոթանալու համար՝ https://bit.ly/3YtıjLh